ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

2025 թվականի մարտի 31-ին ժամը 11:00-ին Արարատի մարզի Արարատ քաղաքի Շահումյան 34 հասցեում գտնվող Արարատի համայնքապետարանում տեղի կունենա Արարատ համայնքի վարչական տարածքում գտնվող,համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի աճուրդ վաճառք: Աճուրդի է ներկայացվում.

1.ք.Արարատ Մուրացան 14/1 հասցեում գտնվող 03-002-0034-0014 կադաստրային ծածկագիրը կրող 0.08331 հա մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամաս, սահմանված է մեկնարկային գին 2500 ՀՀ դրամ 1 քմ-ի համար:

2 ք.Արարատ Ղուկասյան 1/3 հասցեում գտնվող 03-002-0020-0175 կադաստրային ծածկագիրը կրող 0.05098 հա մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը, սահմանված է մեկնարկային գին 2500 ՀՀ դրամ 1 քմ-ի համար:

3. ք.Արարատ ՈԿՖ բանավան թաղամաս 22/5 հասցեում գտնվող 03-002-0060-0013 կադաստրային ծածկագիրը կրող 0.04194 հա մակերեսով բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասը, սահմանված է մեկնարկային գին 2500 ՀՀ դրամ 1 քմ-ի համար:

4. Արարատ գյուղի վարչական տարածքում գտնվող 03-015-0050-0078 կադաստրային ծածկագիրը կրող 0.03849 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսք, սահմանված է մեկնարկային գին 200000 ՀՀ դրամ:

5. Երասխ գյուղի Արաքսի փողոց 1-ին փակուղի 6 հասցեում գտնվող 03-042-0019-0011 կադաստրային ծածկագիրը կրող 1.0111 հա մակերեսով արդյունաբերական,ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողամասը, սահմանված է մեկնարկային գին 400 ՀՀ դրամ 1 քմ-ի համար:

6. Երասխ գյուղի վարչական տարածքում գտնվող 03-042-0209-0003 կադաստրային ծածկագիրը կրող 0.25011 հա մակերեսով

գյուղատնտեսական նշանակության կորիզավոր հողամասը, , սահմանված է մեկնարկային գին 250000 ՀՀ դրամ:

7. Երասխ գյուղի Մ.Մեծարենցի փողոց 2 հասցեում գտնվող 03-042-0046-0021 կադաստրային ծածկագիրը կրող 0.09102 հա մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը, սահմանված է մեկնարկային գին 400 ՀՀ դրամ 1 քմ-ի համար:

8. Պարույր Սևակ գյուղի վարչական տարածքում գտնվող 03-078-0194-0007 կադաստրային ծածկագիրը կրող 0.495 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսք, սահմանված է մեկնարկային գին 50000 ՀՀ դրամ:

Նշված հողատարածքների համար սահմանված է նախավճար՝ մեկնարկային գնի 50%-ը,մասնակցության վճար՝ 5000 ՀՀ դրամ, մրցույթային քայլի չափը՝ մեկնարկային գնի 5%-ի չափով:

Աճուրդին մասնակցելու անհրաժեշտ փաստաթղթերն են՝ մասնակցության վճարի անդորրագիր և անձնագրի պատճեն:

Հայտերի ընդունումը դադարեցվում է աճուրդի անցկացման օրվանից 3 /երեք/ աշխատանքային օր առաջ:

Տվյալ հողամասերը ընդգրկված չեն Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների ցանկում,ինչպես նաև ընդգրկված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում,հողամասերի օգտագործումը չի առաջացնում սերվիտուտ:

Աճուրդի պայմաններին ծանոթանալու և լրացուցիչ տեղեկությունների համար դիմել Արարատի համայնքապետարան՝ աճուրդային հանձնաժողովին:

Արարատի համայնքապետարան /հեռ. 060 88 55 55 /